

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՄԱՐԳՍՑԱՆ ԱՆԻ ԳԵՎՈՐԳԻ

**ՄԱՐԴՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի զիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ Գարուշի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Գևորգ Բալարեկի Դանիելյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Աշոտ Սերյոժայի Հայրապետյան

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի հունիսի 26-ին, ժամը 14:30-ին ՀՀ ԲՈՂ-ի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Մեղմագիրն առաքվել է 2015 թվականի մայիսի 25-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**

Ա.Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 1990-ական թվականներին Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, երկրում սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք համարեցին սահմանադրական արդարադատության նոր համակարգի արմատավորումը և կայացումը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից շրջադարձային եղան 2005 թվականին մեր երկրում իրականացված սահմանադրական բարեփոխումները:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերը հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ձեռք են բերում առավել մեծ կարևորություն և համակարգային կարգավորման անհրաժեշտություն, մեծապես արժևորվում է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության կառուցակարգային գործուն մեխանիզմների ստեղծման և դրանց գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների լուծումն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական շրջանակներում:

Սույն աշխատանքում իրավական պատշաճ վերլուծության առարկա են հանդիսանում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի, դրա իրացման ձևերի, սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու հետ կապված հրատապ մի շարք հիմնախնդիրներ, սահմանադրական արդարադատության միջոցով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության հետ կապված բազմաթիվ խնդրահարույց հիմնահարցեր:

Վերլուծության առարկա են նաև սահմանադրական դատարանի և այլ դատարանների իրավասությունների սահմանազատման և փոխհարաբերակցության հիմնախնդիրները, ինչպես նաև սահմանադրական դատարանի որոշումների՝ որպես դատական գործերի վերանայման համար նոր հանգամանքների, կատարման հետ կապված արդի խնդիրները: Ներկայումս սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների միջոցով՝ անձանց սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համատեքստում, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության հիմնահարցերը համակարգային մոտեցմամբ նոր հետազոտությունների անհրաժեշտություն ունեն, ինչը նույնպես վկայում է սույն թեմայի արդիականության, դրա համակողմանի և խորքային ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Ատենախոսության մեջ քննարկվել են մեծաթիվ հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր իրավաբան գիտնականների աշխատություններում:

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ-ում սույն հիմնահարցերն առանձին համալիր գիտական քննարկման ու համեմատական սահմանադրաիրավական վերլուծության առարկա չեն եղել, դեռևս բազմագործոն վերլուծության արդյունքում մեզանում չի մշակվել տվյալ հիմնախնդրի վերաբերյալ հիմնավոր հայեցակարգային մոտեցում, ինչի փորձն արված է սույն աշխատանքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն թեկնածուականատենախոսության հիմնական նպատակն է մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ձևավորման պատմության, դրա իրացման արդի հիմնախնդիրների, առկա մարտահրավերների, զարգացման միտումների և առաջիկա հեռանկարների համալիր համեմատական ուսումնասիրությունը, ինչպես նաև այնպիսի լուծումների առաջադրումը, որոնք հնարավորություն կտան մարդուն և քաղաքացուն դիտարկել որպես սահմանադրական արդարադատությունում անմիջական և ակտիվ դերակատարություն ունեցող սուբյեկտի, և մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման պատշաճ ապահովման միջոցով երաշխավորել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, սահմանադրական արդարադատության կենսունակությունն ու արդյունավետությունը:

Հետազոտության նպատակին հասնելու համար հիմնականում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքի իրավաբանական բնույթը,
- հետազոտել այդ իրավունքի տեղն ու դերը մարդու իրավունքների և ազատությունների համակարգում,
- բացահայտել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի նշանակությունը՝ անձի սոցիալական վարքագծի սահմանադրականացման համատեքստում,
- հետազոտել քննարկվող իրավունքով օժտված սուբյեկտների կազմը և առանձնահատկությունները,
- ուսումնասիրել խնդրո առարկա իրավունքի տեսանկյունից սահմանադրական վերահսկողության օբյեկտների շրջանակը,
- ներկայացնել անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի զարգացման միջազգային արդի միտումները,
- քննարկել անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման առանձնահատկությունները ՀՀ-ում,
- վեր հանել ՀՀ-ում սույն իրավունքի իրացման հետ կապված արդի մի շարք հիմնախնդիրներ և առաջարկել դրանց լուծման գործուն միջոցներ և արդյունավետ ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտը սահմանադրաիրավական այն հարաբերություններն են, որոնք կապված են անձանց սահմանադրական հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորման, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններին դիմելու իրավունքի ձևավորման և կայացման գործընթացի, առկա հիմնական միտումների, ինչպես նաև հետագա զարգացման ու կատարելագործման հեռանկարների հետ:

Հետազոտության առարկան են կազմում ՀՀ օրենսդրությունը, արտասահմանյան երկրների օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, գիտական վերլուծական միտքը, ՀՀ և այլ պետությունների սահմանադրական դատարանների, դատական բարձրագույն այլ ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան, ՀՀ-ում ու մի շարք այլ պետություններում սույն ոլորտում առկա վիճակը:

Ատենախոսության տեսական և նորմատիվ հիմքերը: Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերից կարելի է առանձնացնել հետևյալ աշխատանքները.

- իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնահարցերին նվիրված աշխատությունները,

- սահմանադրական վերահսկողությանը նվիրված աշխատությունները,

- դատական սահմանադրական վերահսկողությանը նվիրված աշխատությունները,

- սահմանադրական դատարանի որոշումների բնույթին, իրավական համակարգում դրանց զբաղեցրած տեղին ու դերին վերաբերող աշխատությունները (հայրենական և արտասահմանյան),

- մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իմաստավորմանը նվիրված աշխատանքները, այդ թվում՝ քննարկվող հիմնախնդիրներին առնչվող իրավահամեմատական վերլուծությունները,

- «անհատական սահմանադրական դիմում» հասկացության ուսումնասիրությանն ուղղված գիտական հոդվածները,

- իրավական ակտերը, այդ թվում՝ ներպետական և օտարերկրյա նորմատիվ ակտերը, ՀՀ և այլ պետությունների սահմանադրական դատարանների որոշումները,

- միջազգային կազմակերպությունների ու դրանց խորհրդակցական մարմինների՝ հետազոտության օբյեկտին ու առարկային վերաբերող ակտերը, մասնավորապես՝ «Տողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փաստաթղթերը:

Ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել ինչպես հայազգի իրավագետների՝ Ն. Այվազյանի, Ս. Ավազյանի, Գ. Դանիելյանի, Ա. Երիցյանի, Հ. Խաչատրյանի, Գ. Հարությունյանի, Ա. Մանայանի, Վ. Մնացականյանի, Վ.

Պողոսյանի, Վ. Ստեփանյանի, Ա. Վաղարշյանի, Ն. Քոչարյանի և այլոց, այնպես էլ օտարագզի գիտնականների, մասնավորապես՝ Վ. Բազլայի, Ն. Բոնդարի, Վ. Ջորկինի, Վ. Լուչինի, Ա. Կլիշասի, Օ. Կուտաֆինի, Է. Կուրիսի, Վ. Մակլակովի, Ջ. Նովակի, Օ. Սիդորենկոյի, Բ. Ստրաշունի, Ն. Վիտրուկի և Հ. Քելզենի աշխատությունները:

Ատենախառության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները), այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ պատմական-իրավական վերլուծության, ՀՀ սահմանադրական դատարանի մոտեցումների, դատական պրակտիկայի ամփոփման, իրավահամեմատական, ձևական-իրավական և այլ մեթոդներ: Հիշյալ մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտելու հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները, վեր հանելու սահմանադրական արդարադատության բնագավառում մարդու և քաղաքացու դերակատարությունը, սույն ոլորտում ներկայումս առկա խնդրահարույց հարցադրումները և առաջարկելու այդ հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ և գործուն կառուցակարգեր՝ այդպիսով որոշ չափով նպաստելով հայ սահմանադրականության ամրապնդմանն ու զարգացմանը:

Ատենախառության գիտական նորույթը: Սույն աշխատանքը ՀՀ-ում առաջին փորձն է համակողմանի բացահայտելու մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի էությունն ու սահմանադրաիրավական բովանդակությունը, համալիր ուսումնասիրելու մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները, հատկապես՝ իրավունքի գերակայության սկզբունքի իրացման տեսանկյունից, բացահայտելու այդ իրավունքի տեղն ու դերը մարդու սահմանադրական մյուս բոլոր իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գործում:

Համալիր ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի տեսական եզրահանգումներ, այլ նաև ներկայացվել են ՀՀ Սահմանադրության, գործող օրենսդրական ակտերի և դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ, գիտական կոնկրետ մոտեցումներ են առաջարկվել սահմանադրական արդարադատության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման կապակցությամբ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից բխող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնադրույթները.

1. Մարդու սահմանադրական հիմնարար իրավունքները, որպես անմիջականորեն գործող իրավունք, իրավական պետությունում կարող են երաշխավորվել, ապահովվել և արդյունավետորեն պաշտպանվել բացառապես մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համարժեք սահմանադրական և օրենսդրական երաշխիքների ապահովման պայմաններում:

2. Սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը միանշանակորեն ենթադրում է այդ իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գործում պետական իշխանության մարմինների, հանրային իրավունքի բոլոր սուբյեկտների համարժեք պարտականությունների առկայություն: Մասնավորապես, դատարանների կողմից նախնական սահմանադրական հարցում ներկայացնելը չի կարող ընկալվել միայն որպես դատարանի իրավունք. այն հարկ է ընկալել իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում ստացած «լիազորություն» հասկացության համատեքստում և մեկնաբանել որպես դատարանի լիազորություն՝ համապատասխան ուղղությամբ ձևավորելով նաև անհրաժեշտ պրակտիկա: Այսինքն՝ իրավունքի գերակայության կարևորագույն սկզբունքով առաջնորդվելիս՝ սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար անհրաժեշտ է ընկալել որպես ոչ միայն իրավունք, այլև պարտականություն, ինչը հնարավորություն կտա ապահովելու սահմանադրական դատարանի և այլ դատարանների միջև ակտիվ փոխգործակցությունը, ինչպես նաև կնպաստի երկրում սահմանադրականության հաստատմանն ու սահմանադրական իրավակարգի ամրապնդմանը: Դա պետք է վերաբերի նաև սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտված բոլոր սուբյեկտներին:

3. ՀՀ Սահմանադրությամբ որդեգրվել է մարդու իրավունքների ու ազատությունների չտարբերակված ամրագրման տրամաբանությունը, ինչի արդյունքում ներպետական մակարդակում համակարգային ամբողջականության մեջ չի ձևավորվել մարդու սահմանադրական իրավունքների դատական ու այլ միջոցներով պաշտպանության արդյունավետ համակարգ: Ներկայացված հիմնախնդրի լուծումն անհրաժեշտաբար պահանջում է մի շարք քայլերի ձեռնարկում, մասնավորապես՝ սահմանադրական մակարդակում մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային, կառուցվածքային և խմբագրական հստակեցումներ, դրանց սահմանափակումների հստակեցում՝ ելնելով դրանց դասակարգման միջազգային չափորոշիչներից ու զարգացման առկա

միտումներից, մարդու իրավունքներին առնչվող հարցերի՝ Սահմանադրությամբ և օրենքին վերապահված իրավակարգավորումների առնչությամբ համամասնականության և համակարգային ամբողջականության սկզբունքների հետևողական իրացում, մարդու իրավունքների և ազատությունների համակարգում սահմանադրական արդարադատության իրավունքի տեղի և դերի բացահայտում ու ամրագրում, ինչպես նաև սահմանադրական դատարանի կողմից պաշտպանության ենթակա իրավունքների և ազատությունների շրջանակի հստակ նախատեսում:

4. Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության երաշխավորման տեսանկյունից ներկայումս բացառիկ կարևորություն է ձեռք բերում անհատի սոցիալական վարքագծի սահմանադրականացման անհրաժեշտությունը՝ արժեքանական հիմք ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը: Անձի սոցիալական վարքագիծն, առաջին հերթին, հանդիսանում է իմաստավորված, բանական վարքագիծ, ունի արժեքանական որոշակի հիմք, դրսևորման կոնկրետ շարժառիթներ, արտահայտման բնորոշ ձևեր ու եղանակներ, որոնք ուղղորդում են անհատի ինքնադրսևորումը ներկայիս բազմաշերտ սոցիալական կապերում, նպաստում են հասարակական կյանքում մարդու տեղի և դերի գնահատմանն ու իմաստավորմանը՝ նրա աշխարհընկալման արժեքային համակարգին համապատասխան: Ըստ այդմ, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման դիտակետից՝ անձի սոցիալական վարքագծի սահմանադրականացման անհրաժեշտությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ վերջինս մարդու իրավունքների և ազատությունների իրացման համար անհրաժեշտ ու բավարար իրավական նախադրյալների և համարժեք երաշխիքների ստեղծման յուրօրինակ հնարավորություն է:

5. Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընդհանուր առմամբ ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Սակայն, միաժամանակ, անհատական դիմումի յուրահատկությունը կայանում է նրանում, որ անձը, դիմելով սահմանադրական դատարան, ոչ միայն ձգտում է պաշտպանել իր խախտված իրավունքը, այսինքն՝ հետապնդում է մասնավոր շահ, այլև իրացնում է պետության կառավարմանը մասնակցելու իր սահմանադրական իրավունքը, հետապնդում է հանրային շահ: Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը հարկ է դիտարկել երկրում իրավակարգի ժողովրդավարացման գործընթացի համատեքստում և արձանագրել, որ տվյալ իրավունքի իրացման շնորհիվ անձը հնարավորություն է ունենում անմիջական վերահսկողություն նախաձեռնելու օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների նկատմամբ: Ըստ այդմ, անհատական սահմանադրական դիմումների նշանակությունը վերաիմաստավորելու, սահմանադրական արդարադատության իրականացման

հարցում անհատի դերն ու մասնակցությունն առավել ամրապնդելու տեսանկյունից կարևորվում է այն իրողության գիտակցումը, որ անհատական դիմումների միջոցով ոչ միայն պաշտպանվում են կոնկրետ անձի իրավունքները, այլև մարդը դառնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման գործընթացների ակտիվ (գործուն) մասնակից, որոշ իմաստով իրականացնում է անմիջական ժողովրդավարության իր իրավունքը:

6. Հայաստանի Հանրապետությունում ներդրված անհատական սահմանադրական դիմումների համակարգի և եվրոպական առաջադիմական երկրներում գործող համապատասխան ինստիտուտների համադրված վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում ՀՀ-ում սահմանադրական և օրենսդրական մի շարք փոփոխությունների նախաձեռնման ու իրականացման օրակարգային անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով հնարավորինս ընդլայնել անձանց դիմումների հիման վրա քննվող գործերով սահմանադրական վերահսկողության ենթակա օբյեկտների շրջանակը, ինչը միանշանակորեն հնարավորություն կտա մարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ գանգատներին սպառիչ լուծում տալ առավելապես ներպետական արդարադատության շրջանակներում:

7. Հայաստանի Հանրապետությունում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու տեսանկյունից հարկ է առաջնային կարևորություն տալ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վերաարժևորման և այդ ինստիտուտի արդյունավետ գործարկման հետ կապված հիմնահարցերի լուծման հրատապ անհրաժեշտությանը: Դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը աներկբայորեն պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պարտավոր է ապահովել խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Ուստի, միայն համարժեք ուշադրության արժանացնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և հետևողական մոտեցում ցուցաբերելով նոր հանգամանքների ինստիտուտի կենսագործման հարցում, հնարավոր կլինի հասնել անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման արդյունավետության անհրաժեշտ մակարդակի և երաշխավորել դրա միջոցով մարդու սահմանադրական այլ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և/կամ վերականգնումը:

Հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտատեսական և գործնական նշանակությունը կարևորվում է նրանով, որ դրանում կատարված վերլուծությունների

արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել «Սահմանադրական իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Սահմանադրական վերահսկողություն», «Դատական սահմանադրական վերահսկողություն» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է սահմանադրական արդարադատությանն ու դատական սահմանադրական վերահսկողությանը: Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել իրավաստեղծ գործունեության իրականացմանը՝ ՀՀ Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության դրույթների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մոնիցինգի իրավունքի ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումը և գրախոսումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված գիտական հոդվածներում, խորհրդաժողովներին ներկայացված զեկույցներում, որոնցում ներկայացվել են ատենախոսության մի շարք կարևոր հիմնադրույթներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Սահմանադրական արդարադատությունը և դրա իրականացման առանձնահատկությունները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխից:

Առաջին ենթագլխում՝ **«Սահմանադրական արդարադատություն», «սահմանադրական վերահսկողություն» և «սահմանադրական դատավարություն» եզրույթների ծագումը, բովանդակությունը և փոխհարաբերակցությունը**՝ վերտառությամբ, Հեղինակը, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի էության,

սահմանադրաիրավական բովանդակության, այդ իրավունքի իրացման ոլորտում առկա մի շարք հիմնահարցերի ուսումնասիրության շրջանակներում կարևորելով այնպիսի հասկացությունների բովանդակության բացահայտումը, ինչպիսիք են՝ «սահմանադրական արդարադատություն», «սահմանադրական դատավարություն», «սահմանադրական վերահսկողություն» և «դատական սահմանադրական վերահսկողություն» եզրույթները, համապատասխան վերլուծության է ենթարկում դրանք, շարադրում և ընդհանրացնում է իրավաբանական գրականության մեջ տարբեր հետազոտողների կողմից ներկայացված տեսակետներն ու վերջիններիս կողմից շարադրված ձևակերպումները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սահմանադրական և այլ դատարանների իրավագործության սահմանազատումը, սահմանադրական դատարանների գործունեության առանձնահատկությունները»** վերտառությամբ, անդրադարձ կատարելով սահմանադրական արդարադատության մարմնի և պետությունների տարածքում գործող այլ դատարանների փոխհարաբերակցության և իրավագործության սահմանազատման հիմնախնդիրներին, Հեղինակի կողմից նախևառաջ հակիրճ ներկայացվում է սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, գործունեության առանձնահատկությունները, լիազորությունները, տեղն ու դերը պետական, և մասնավորապես, դատական իշխանության համակարգում, որից հետո իրավական պատշաճ վերլուծության են ենթարկվում սահմանադրական դատարանի և դատական այլ մարմինների («սովորական» դատարանների) իրավասությունների հնարավոր բախումներն ու հակադրությունները, դրանց փոխհարաբերությունների օրակարգային հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի էությունն ու սահմանադրաիրավական բովանդակությունը»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Մարդու սահմանադրական արդարադատության իրավունք» հասկացության բովանդակությունը, սահմանադրական արդարադատության իրավունքի տեղն ու դերը մարդու իրավունքների և ազատությունների համակարգում»** վերտառությամբ, Հեղինակը, մեծապես արժևորելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի հասկացության բովանդակության բացահայտման և հստակեցման անհրաժեշտությունը, ինչպես նաև մարդու սահմանադրական այլ իրավունքների և ազատությունների իրականացման, պաշտպանության և երաշխավորման հարցում այդ իրավունքի եզակի տեղն ու անգնահատելի դերակատարությունը, անհրաժեշտ հետազոտության է ենթարկում քննարկվող իրավունքի էությունը, սահմանադրաիրավական բովանդակությունը և

առհասարակ վերջինիս դերը մարդու և քաղաքացու սահմանադրական (հիմնարար) իրավունքների ու ազատությունների համակարգում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սահմանադրական դատարանների անհատական մատչելիության հիմնախնդիրները»** վերտառությամբ, Հեղինակի կողմից, նախևառաջ, շեշտադրվում են սահմանադրական արդարադատության անհատական անմիջական մատչելիության դրական հատկություններն ու ընդգծված առավելությունները՝ միաժամանակ ներկայացնելով դրա կիրառության ոլորտի ընդլայնման և վերջինիս նշանակության բացարձականացման արդյունքում հնարավոր ոչ նվազ կարևորություն ունեցող հիմնախնդիրները, որոնք ևս պահանջում են սևեռում ուշադրություն և հրատապ ու համարժեք լուծումներ: Սույն ենթագլխի շրջանակներում քննարկվում են նաև սահմանադրական դատարաններում անձանց անհատական մատչելիության որոշ այլ հարցադրումներ, որոնք կապված են ինչպես սահմանադրական դատարանների լիազորությունների ծավալի, այնպես էլ սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտված սուբյեկտների շրջանակի հետ:

Երրորդ ենթագլխում՝ **«Սահմանադրական դիմումի (բողոքի) տեսակներն ու ձևերը (մոդելները)՝ միջազգային ներկա զարգացումների համատեքստում»** վերտառությամբ, Հեղինակը, ուսումնասիրելով «անհատական սահմանադրական բողոք» հասկացությունը և վերջինիս տարատեսակ բնորոշումները, առանձնակի հետազոտության և քննարկման առարկա է դարձնում «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) 2010 թվականի դեկտեմբերի 17-18-ի 85-րդ լիազումար նիստի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը, որը, բացահայտելով և վերհանելով սահմանադրական վերահսկողության տարբեր համակարգերում մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության գործող կառուցակարգերը, դրանց դրսևորման առանձնահատկությունները, դրանցում առկա առավելություններն ու թերությունները, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին է փոխանցում սույն ոլորտում ձևավորված լավագույն լուծումների փորձը՝ դրանով իսկ նպատակ ունենալով առավելագույնս նպաստել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման առանձնահատկությունները և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու անձի իրավունքը և սահմանադրական դատարան դիմելու նախապայմանները»** վերտառությամբ,

վերլուծության են ենթարկված ՀՀ-ում սահմանադրական արդարադատության մարմին անհատական դիմումներ ներկայացնելու իրավունքի իրացման առանձնահատկությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված նախադրյալներն ու պայմանները, ՀՀ սահմանադրական դատարանում համապատասխան դիմումների հիման վրա գործերի քննությանը բնորոշ յուրահատկությունները, ինչպես նաև ներկայացված են ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորումները, այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումները և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննության և լուծման առանձնահատկություններն ու արդի հիմնախնդիրները»** վերտառությամբ, Հեղինակն ընդգծում է մեր երկրում 2005 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումներով անհատական սահմանադրական գանգատարկման ինստիտուտի ներդրման կարևորությունը, միաժամանակ շեշտադրելով սահմանադրաիրավական կարգավորման քննարկվող հարցի շուրջ՝ անհատական դիմումների հիման վրա գործերի քննության և լուծման հետ կապված բազում վիճահարույց հարցերի և իրավական կարգավորման հետագա վերամշակման և կատարելագործման կարիք ունեցող թերի իրավադրույթների առկայությունը, ինչպես նաև դրա արդյունքում որոշ իրավանորմերում լրացուցիչ փոփոխություններ և լրացումներ կատարելու հրատապ անհրաժեշտությունը:

Երրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և պետական իշխանության այլ մարմինների փոխհարաբերությունները՝ մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հարցում»** վերտառությամբ, հետազոտվում են ՀՀ սահմանադրական դատարանի և պետական իշխանության մի շարք այլ մարմինների միջև ծավալվող բազմաբնույթ և տարաբովանդակ փոխհարաբերությունները, մասնավորապես և հատկապես՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համատեքստում: Սույն ենթագլխի շրջանակներում Հեղինակն առանձնակիորեն ուսումնասիրում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների՝ որպես նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի ընկալման և կիրառման առնչությամբ ծագող որոշ հիմնախնդիրներ՝ առաջարկելով անհրաժեշտ լուծումներ:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու Հեղինակի եզրահանգումները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

▪ Անվիճելի է, որ սահմանադրական արդարադատությունը ժամանակակից իրավական, ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքների դատական պաշտպանության ամենարդյունավետ ինստիտուտն է: Սահմանադրական արդարադատության հիմնական նպատակներից մեկը յուրաքանչյուր անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգի գործունակության ապահովումն է՝ մարդու և քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման միջոցով: Այսպիսով, սահմանադրական արդարադատության համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում անհատական դիմումի ինստիտուտը, որը մարդուն և քաղաքացուն հնարավորություն է տալիս, ուղղակիորեն դիմելով սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին, իրենց հիմնական իրավունքներն ու ազատությունները պաշտպանել տարատեսակ ոտնձգություններից:

▪ Ժամանակակից աշխարհում անհատին հարկ է ընկալել որպես քաղաքացիական հասարակությունում սահմանադրաիրավական հարաբերությունների ակտիվ սուբյեկտ և գործուն մասնակից. սահմանադրական արդարադատության շրջանակներում մարդն ունի առանցքային դերակատարություն, քանի որ վերջինիս դիմումի հիման վրա քննվող գործը և դրա արդյունքներով սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումն էական նշանակություն ունեն ինչպես տվյալ անձի, այնպես էլ այլ անձանց համար, ինչպես այդ գործի սահմաններում, այնպես էլ մի շարք այլ գործերով: Հետևապես ակնհայտ է, որ մարդու իրավունքների և ազատությունների հարցերով սահմանադրական արդարադատություն իրականացնող կառույցների կողմից քննված և քննվող գործերն ունեն սոցիալ-իրավական լայնամասշտաբ ուղղվածություն և նշանակություն. այդ գործերով, ըստ էության, ոչ միայն կարևորվում է մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխավորումը, այլև ակնհայտ է, որ այդ որոշումներն ունեն մեծ նշանակություն օբյեկտիվ իրավունքների պահպանության և օրենսդրական անհրաժեշտ բարեփոխումների առումով:

▪ Առանձնապես կարևորում ենք անձի սահմանադրական արդարադատության իրավունքի և վերջինիս սոցիալական վարքագծի սահմանադրականացման միջև առկա կապի ուսումնասիրությունը: Մեր խորին համոզմամբ, իրավունքի գերակայության ապահովման հետ կապված հարցերի լուծման մեկնարկային կետը մարդու սոցիալական վարքագծի սահմանադրականացումն է՝ անձի կողմից իր հիմնարար իրավունքների գիտակցման հիման վրա, ինչպես նաև իշխանությունների հանրային վարքագծի սահմանադրականացումն է՝ «մարդ-հասարակություն-պետություն» եռամիասնական համակարգի մեջ: Յուրաքանչյուր իրավական, ժողովրդավարական պետության բարձրագույն առաքելությունը մարդու,

հասարակության և պետության սոցիալական վարքագծի սահմանադրական այնպիսի կանոնակարգումն է, երբ անհատի անքակտելի իրավունքները դառնում են նրա ազատությունների գլխավոր երաշխիքը:

▪ Իր լիազորությունների իրականացման ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանի և մյուս դատարանների իրավասությունները սահմանազատելիս անհրաժեշտ է խորությամբ հաշվի առնել մի շարք կարևորագույն չափանիշներ, որոնցից, մասնավորապես, հարկ ենք համարում շեշտել հետևյալը. ՀՀ սահմանադրական դատարանի և դատական այլ մարմինների փոխհարաբերությունների կապակցությամբ ծագող խնդրահարույց հարցադրումներից մեկն առնչվում է դատարանների այսպես կոչված «հայեցողական լիազորություններին» այն բոլոր դեպքերում, երբ հարկավոր է որոշել, թե արդյոք դատավարության կողմերից մեկի ներկայացրած նորմի սահմանադրականության պարզաբանման վերաբերյալ դիմումի (միջնորդության) հիման վրա (կամ սեփական նախաձեռնությամբ) նախնական սահմանադրական հարցմամբ դիմել սահմանադրական դատարան, թե՛ ոչ: Սահմանադրականության հարցեր քննելուն աջակցելու սովորական դատարանների լիազորությունները և պատրաստակամությունը, առաջին հերթին, անհրաժեշտ և կարևոր են հենց այն անձի համար, ում իրավունքները խախտվել են, քանի որ դրանից է կախված գործի արագ և արդյունավետ քննությունը՝ կամ սովորական դատավարության ընթացակարգով, կամ համապատասխան նախնական հարցում ներկայացնելու միջոցով: Հարկ է մշտապես հիշել, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների (պետական մարմինների) համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հաստատելու և Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում: Ընդ որում, 2005թ. սահմանադրական փոփոխություններով դատարաններին վերապահված՝ սահմանադրական դատարան անմիջականորեն դիմելու իրավունքը համարժեք խորությամբ չի ընկալվել և ամրագրվել ներկայումս գործող դատավարական օրենսգրքերում (քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերում), չեն ստեղծվել դատարանների այդ իրավունքի իրացման համար օրենսդրական հստակ կառուցակարգեր, բացակայում է սահմանադրական փոփոխությունների, օրենսդրական կարգավորումների և հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների միջև անհրաժեշտ ներդաշնակությունը: Ելնելով վերոգրյալից՝ դատավարական հիշյալ օրենսգրքերով հարկ է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնց իրացումը հնարավորություն կտա ապահովելու սահմանադրական դատարանի և այլ դատարանների միջև ակտիվ փոխգործակցությունը, ինչպես

նան կնպաստի երկրում սահմանադրականության հաստատմանն ու սահմանադրական իրավակարգի ամրապնդմանը:

Հետևապես, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համակարգը կարող է արդյունավետորեն գործել միայն այն դեպքում, երբ դատական իշխանության գործառույթ իրականացնող բոլոր մարմիններն աշխատում են փոխհամաձայնեցված, վստահում են միմյանց, խուսափում են ավելորդ և անհիմն «մրցակցության» տարատեսակ դրսևորումներից, հետևում են ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերով նախատեսված պահանջներին՝ բացառապես նպատակ ունենալով վերացնելու թույլ տրված խախտումները, վերականգնելու ֆիզիկական և իրավաբանական անձանց ոտնահարված իրավունքները:

▪ 2005 թվականին ՀՀ-ում նախաձեռնված և կյանքի կոչված սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանադրական դատարանը հնարավորություն ստացավ առավել արդյունավետ կերպով իրականացնելու իր առջև դրված խնդիրները (մասնավորապես, այն հանգամանքի շնորհիվ, որ ներմուծվեց անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտը): Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի գոյության վերաբաժնորման և վերաիմաստավորման ներկայիս միտումը՝ ուղղված անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, կարծում ենք, անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության հետագա (ընդ որում, մոտ հեռանկարում ծրագրված) փոփոխություններով սահմանադրական դատարանին իրավասություն տալ որոշելու ոչ միայն օրենքների դրույթների, այլ նաև իրավական այլ ակտերով նախատեսված կարգավորումների սահմանադրականության հարցերը, քանի որ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այլ իրավական ակտերով ևս կարող են խախտվել մարդու սահմանադրական որոշ իրավունքներ, իսկ ներկայիս պայմաններում սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինը դրանք վերականգնելու իրավագործություն չունի, հետևաբար, սահմանադրական արդարադատությունը չի կարող լիարժեքորեն իրականացվել: Մեր կարծիքով, անհրաժեշտ է անձին սահմանադրական դատարան դիմելու ազատ իրավունք ընձեռել՝ սահմանադրական վերահսկման օբյեկտների շրջանակում ներառելով իրավական ակտերի ավելի լայն «ցանկ», ի տարբերություն գործող կարգավորմամբ նախատեսված՝ միայն օրենքների սահմանադրականության վիճարկման հնարավորության: Անհատական սահմանադրական դիմումի առնչությամբ Գերմանիայի, Ավստրիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների (որոնցում անհատական գանգատարկման առարկա են բոլոր նորմատիվ ակտերը, այդ թվում՝ դատարանների վերջնական ակտերը, ինչպես նաև

հիմնական սահմանադրական ինստիտուտների և մարմինների գործողություններն ու անգործությունը) փորձի ուսումնասիրության արդյունքներն աներկբայորեն վկայում են, որ առանց լիարժեք սահմանադրական բողոքի գործուն ինստիտուտի ներդրման հնարավոր չէ համակարգայնորեն ապահովել Սահմանադրության գերակայությունը, երաշխավորել սահմանադրականության արմատավորում և կայուն զարգացում:

▪ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առնչությամբ մեր երկրում ներկայումս գործող իրավակարգավորումների պայմաններում չի ապահովվում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ և ոչ արդյունավետ: Այս կապակցությամբ մեծապես կարևորվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ դատավարական օրենսգրքերում 26.10.2011թ. կատարված փոփոխություններն ու լրացումները, որոնցով էական առաջընթաց քայլ կատարվեց մեր երկրում նոր հանգամանքների ինստիտուտի զարգացման և դրա արդյունքում՝ մարդու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ: Այնուհանդերձ, ՀՀ օրենսդրության մեջ այդ հանգամանքի առնչությամբ, ընդհանուր առմամբ, չի դրսևորվել ամբողջական մոտեցում, և այն դեռևս անհրաժեշտ ուշադրության չի արժանացել քննարկվող կարգավորումներին առնչվող այլ դրույթների շրջանակներում: Ըստ այդմ, ներկայումս հարկ է գիտակցել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ մեթոդաբանության վերաիմաստավորման ու հիմնավոր վերաարժևորման անհերքելի և հրատապ անհրաժեշտությունը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում սույն ոլորտում դեռևս շատ անելիքներ կան, որոնք պահանջում են և՛ սահմանադրական, և՛ դրանից բխող օրենսդրական նոր կանոնակարգումների նախատեսում, որոնք պետք է միտված լինեն անհատական դիմումների համակարգի միջոցով մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համընդգրկուն և արդյունավետ պաշտպանության ապահովմանը: Ըստ այդմ, հարկ է մշակել և ներդնել ինչպես անհատական սահմանադրական գանգատի լիարժեք ու ամբողջական համակարգ, այնպես էլ այնպիսի համակարգ, որով կապահովվեն սահմանադրական դատարանի և այլ դատարանների գործառնական արդյունավետ փոխհարաբերությունները, մասնավորապես, բացառելով դատական հայեցողության անհիմն ընդլայնումը, իրավագործության սահմանների խախտումը, որի պայմաններում, նախևառաջ, պետական մարմինները ոչ թե «կփնտրեն» Սահմանադրության գերակայությունն ապահովող պատասխանատուին, այլ կիրացնեն իրենց

սահմանադրաիրավական կոնկրետ լիազորությունները, համակարգված և փոխլրացնող համագործակցությամբ կապահովեն ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

Ըստ այդմ, անառարկելի է, որ սահմանադրական արդարադատությանը ներկայացվող արդի հրամայականները պահանջում են սահմանադրական մտածողության ու մշակույթի նոր որակ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի առավելագույնս արժևորել և իմաստավորել անձի սահմանադրական արդարադատության իրավունքը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Սահմանադրական և այլ դատարանների իրավազորության սահմանազատման ու փոխհարաբերակցության որոշ հիմնախնդիրներ, ՀՌՀ Յոթերորդ տարեկան գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, Երևան, 2013, էջեր 100-109:

2. Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի տեղն ու դերը մարդու իրավունքների և ազատությունների համակարգում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 1-2 (175-176), 2014, էջեր 44-53:

3. ՀՀ սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքի իրացման նախապայմանները, «Օրինականություն» գիտագործնական հանդես, Երևան, 81, 2014, էջեր 39-45:

4. Սահմանադրական արդարադատության անմիջական անհատական մատչելիության որոշ հիմնախնդիրներ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 1-2/2014, էջեր 218-229:

5. Անհատական սահմանադրական դիմումի մոդելները՝ միջազգային ներկա զարգացումների համատեքստում, ՀՌՀ Ութերորդ տարեկան գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, Երևան, 2014, էջեր 222-230:

6. Դատարանների սահմանադրական հարցումները մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի համատեքստում, «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական հանդես, Երևան, 3 (642)-2014, էջեր 155-165:

7. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը՝ մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացման լույսի ներքո, «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 6/2014, էջեր 179-191:

САРГСЯН АНИ ГЕВОРГОВНА

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА ЧЕЛОВЕКА НА КОНСТИТУЦИОННОЕ ПРАВОСУДИЕ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 “Публичное право”

Защита диссертации состоится 26 июня 2015г., в 14:30 часов на заседании специализированного совета ВАК-а 041 по юриспруденции при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Киевяна 8)

РЕЗЮМЕ

В настоящее время проблемы защиты прав человека приобретают все большую важность и нуждаются в систематическом и всестороннем регулировании. Следовательно, высоко ценится создание действенных институциональных механизмов эффективной защиты прав человека в рамках как международной, так и национальной правовых систем.

В результате выполнения исследовательских задач, направленных на достижение поставленной цели, в данной диссертационной работе автором сформулированы следующие выводы и обобщения.

Конституционное правосудие, призвание которого заключается в обеспечении верховенства Конституции, в гарантировании соблюдения конституционного равновесия разделения властей, а также защиты и прямого действия основных прав и свобод человека и гражданина, закрепленных в Конституции, - относительно новый правовой институт в нашей стране. Следует отметить, что переломным моментом с точки зрения повышения эффективности деятельности Конституционного Суда Республики Армения стали проведенные в 2005 году конституционные реформы. Несмотря на некоторые недостатки и пробелы этих реформ, надо подчеркнуть, что значительное расширение перечня субъектов, имеющих право обратиться в Конституционный Суд, дало возможность Конституционному Суду РА иметь более практичную и эффективную роль в деле конституционализации общественных отношений в нашей стране.

В связи с этим подчеркивается, что на сегодняшний день проблемы, связанные с реализацией права человека на конституционное правосудие, являются одними из наиболее актуальных и дискуссионных как в теории конституционного права, так и на практике. Соответственно, невозможно отрицать тот факт, что сегодняшние императивы, представляемые к конституционному правосудию, требуют новое качество мышления и культуры, благодаря чему будет максимально цениться и осмысливаться право человека на конституционное правосудие.

В данной диссертационной работе предметом надлежащего правового анализа являются некоторые актуальные вопросы, связанные с обращением в

Конституционный Суд, в частности, такие проблемы индивидуальной конституционной жалобы, которые касаются определения круга субъектов, обращающихся в Конституционный Суд, круга нормативно-правовых актов, являющихся объектами конституционного контроля, перегрузки конституционных судов и других вопросов.

В соответствии с поставленной целью, на основе комплексного изучения теоретических подходов и правоприменительной практики в своей диссертации автор рассматривает разнообразные модели индивидуальной конституционной жалобы, анализирует особенности возможных разновидностей и типов индивидуального обращения, существующих в различных странах мира, уделяя особое внимание современным международным развитиям и тенденциям. В связи с этим надлежащим образом исследуются подходы Европейской комиссии за Демократию через право (Венецианская комиссия), выявленные в Исследовании “О прямом доступе к конституционному правосудию”, принятом на 85-ом пленарном заседании Венецианской комиссии 17-18 декабря 2010 года, другие исследования Венецианской комиссии и иные немаловажные материалы.

Кроме того, автором рассматриваются важнейшие проблемы разграничения функций и полномочий конституционного и иных судов и соотношения этих органов. В этой связи автор анализирует особенности деятельности Конституционного Суда, его основное призвание и миссию, проблемы точного, соразмерного, соответствующего конституционно-правовому положению этих органов, распределения функций конституционных и общих органов юстиции (как “обычных” судов общей юрисдикции, так и высших судебных инстанций: Кассационного или Верховного суда и Европейского Суда по правам человека), а также актуальные проблемы институционального и функционального разделения компетенций между этими органами.

Автор одновременно тщательно исследует вопросы обращения судов с предварительными конституционными запросами в конституционный суд конкретного государства. Кроме того, подчеркивается важность вышеназванного полномочия судов (а также других государственных органов) именно как средства, содействующего реализации права человека на конституционное правосудие.

В данной работе автором в особенности обсуждаются вопросы, связанные с взаимосвязью и особенностями института пересмотра судебных актов по новым обстоятельствам и института конкретного конституционного контроля, осуществляемого на основе индивидуальных жалоб. В частности, подробно исследуются закрепленные в законодательстве РА правовые положения, сложившаяся судебная практика, постановления и правовые позиции Конституционного Суда РА, в результате чего выявляются существующие в этой сфере проблемные вопросы и предлагаются возможные пути их решения.

SARGSYAN ANI

**THE ACTUAL PROBLEMS OF REALIZATION OF HUMAN RIGHT TO
CONSTITUTIONAL JUSTICE**

Dissertation for the degree of Ph.D. in Law on the specialization of 12.00.02 “Public Law”

The defense of the dissertation will be held on 26 June 2015, at 14:30, at the session of the specialized council 041 on jurisprudence SQC RA at the Public Administration Academy of RA (0028, Yerevan, st. Kievyan 8)

SUMMARY

Nowadays the issues of human rights protection have become the issue of great significance and a systematic and comprehensive regulation is needed. Therefore, establishment of the effective institutional mechanisms of efficient protection of human rights both in the framework of international and national law systems is highly appreciated.

As a result of the implementation of the objectives of the research intended to the achievement of set goals, the author in the given thesis research has formulated following conclusions and generalizations.

Constitutional justice, which mission is to ensure the supremacy of Constitution, guaranteeing the observance of the balance of separation of powers, as well as protection and direct force of fundamental human and citizen’s rights and freedoms enshrined in Constitution, is relatively new legal institute in our country. It is worth to mention, that from the point of view of raising effectiveness of the activity of the Constitutional Court of the Republic of Armenia, the constitutional reforms held in 2005 should be considered as a turning point. Despite of some deficiencies and gaps of these reforms, it is worth to highlight that the significant extension of the list of subjects entitled to apply to the Constitutional Court ensure the possibility of the Constitutional Court to have more practical and efficient role in the work of constitutionalization of social relations in our country.

In this regard it is highlighted that currently the issues related to the realization of the human right to constitutional justice are one of the most urgent and debatable both in the theory of constitutional law and in practice. Accordingly, it is impossible to deny the fact that current imperatives presented to the constitutional justice are in need of new quality of thinking and culture, due to which the human right to the constitutional justice will be maximally appreciated and comprehended at.

The subject of proper legal analysis in this thesis research are some urgent issues related to the appeal to the Constitutional Court, in particular problems, referring to the

determination of the range of the individuals applying to the Constitutional Court, normative-legal acts, which are the objects of the constitutional control, overload of constitutional courts and other issues.

According to the goal set, based on complex research of theoretical approaches and law enforcement practice, the author in the present thesis studies different models of individual constitutional appeal, analyzes the peculiarities of possible types of individual application, existing in different countries of the world, paying special attention to the current international developments and trends. In this regard, the approaches of European Commission for Democracy Through Law (Venice Commission), revealed in the “Direct access to the constitutional justice” research, adopted at the 85th plenary session of Venice commission on December 17-18, 2010, as well as in other researches of Venice Commission and in other materials of no less importance.

Besides, the author studies the most important issues of separation of functions and powers of constitutional and other courts and correlation between these bodies. In this regard, the author analyzes peculiarities of the Constitutional Court’s activity, its main mission, the issues of exact, commensurate, corresponding to the constitutional-legal status of these bodies, functions distribution of constitutional and general bodies of justice (both “general” court of common jurisdiction and supreme judicial instances: Court of Cassation or Supreme Court and European Court of Human Rights), as well as the urgent issues of institutional and functional separation of competences among these bodies.

Simultaneously, the author studies in details the issues of petition of courts to the constitutional court of the given country with preliminary constitutional requests. Besides, the importance of above mentioned authority of the courts (the other state bodies as well) is highlighted as a measure, supporting to the realization of human right to constitutional justice.

In the present work the issues related to the linkage and peculiarities of the institute of review of judicial acts upon new circumstances and the institute of specific constitutional control, conducted based on the individual appeals are especially discussed. In particular the following issues are studied in details: the legal provisions enshrined in the legislation of RA, settled judicial practice, decisions and legal positions of the Constitutional Court of RA, as a result of which existing problematic issues are revealed and possible ways of solution are suggested.